

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի գործունեության

ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով) էներգետիկայի բնագավառում, ջրային համակարգում, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում, փոստային կապի բնագավառում, տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման բնագավառում, տնտեսական մրցակցության բնագավառում կարգավորող մարմին է, որը հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորում է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին», «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Փոստային կապի մասին», «Լիցենզավորման մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» օրենքներով, այլ օրենքներով և ԼՂՀ ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասություններով:

ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը ստեղծվել է ԼՂՀ Նախագահի 2007թ. հուլիսի 12-ի հրամանագրով՝ հետևյալ կազմով.

Վաչե Սուրենի Ադամյան	Հանձնաժողովի նախագահ (լիազորությունների ժամկետը հինգ տարի)
Գարիկ Զոհրապի Ավանեսյան	Հանձնաժողովի նախագահի տեղակալ (լիազորությունների ժամկետը չորս տարի)
Անդրեյ Վլադիմիրի Մուսայելյան	Հանձնաժողովի անդամ (լիազորությունների ժամկետը երեք տարի)
Աիդա Արտյոմի Ավազյան	Հանձնաժողովի անդամ (լիազորությունների ժամկետը երկու տարի)
Հայկ Ցոլակի Թորոսյան	Հանձնաժողովի անդամ (լիազորությունների ժամկետը մեկ տարի)

ԼՂՀ Նախագահի 2008թ. հուլիսի 12-ի թիվ ՆՀ-89-Ա հրամանագրով Հայկ Ցոլակի Թորոսյանը վերանշանակվել է ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի անդամ՝ հինգ տարի պաշտոնավարման ժամկետով:

Հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքով սահմանված իր իրավունքների ու պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ

պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Կարգավորման հիմնական սկզբունքներն են՝

- կարգավորման իրականացումն ինքնուրույն պետական մարմնի կողմից, օրենքով լիազորված իրավասությունների շրջանակում.

- կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը.

- կարգավորման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը հասարակության համար.

- սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը.

- մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը:

Տնտեսական մրցակցության բնագավառում հանձնաժողովի գործունեության շրջանակներն են՝

- հակամրցակցային համաձայնությունները.

- մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը.

- համակենտրոնացումը.

- անբարեխիղճ մրցակցությունը.

- պետական օժանդակությունը:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում հանձնաժողովի խնդիրներն են՝

- ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանումը և խրախուսումը.

- հակամրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը և նախազգուշացումը.

- տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը.

- բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը:

ՀՀ-ում այդ բնագավառների գործունեությունը կարգավորող երեք հանձնաժողով է գործում.

1. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

2. Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով.

3. Հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողով:

Երեք հանձնաժողովների աշխատակազմերի աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմում է 221 աշխատող:

2008թ. ԼԴՀ հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպել է աշխատակազմի աշխատողների հետևյալ թվաքանակով.

Հունվար	11 աշխատող
Փետրվար	11 աշխատող
Մարտ	11 աշխատող
Ապրիլ	11 աշխատող
Մայիս	11 աշխատող
Հունիս	12 աշխատող
Հուլիս	14 աշխատող
Օգոստոս	13 աշխատող
Սեպտեմբեր	13 աշխատող
Հոկտեմբեր	12 աշխատող
Նոյեմբեր	14 աշխատող
Դեկտեմբեր	16 աշխատող

2008թ. հանձնաժողովի աշխատակազմի համար սահմանվել է 22 հաստիք:

Հանձնաժողովի աշխատակազմի ձևավորումը և համալրումը շարունակական բնույթ է կրում, այն ժամանակի խնդիր է: Հանձնաժողովի աշխատակազմին ներկայացվող պահանջները որոշակի առանձնահատկություններ ունեն, կարգավորման ոլորտում ծագող հարաբերությունների և հանձնաժողովի գործունեության բազմաբնույթ ու բազմաշերտ լինելու հանգամանքի հետևանքով:

Աշխատակազմի աշխատակիցները իրենց մասնագիտական առանձնահատուկ հմտությունները ձեռք են բերում աշխատանքային գործունեության ժամանակ՝ տեսական գիտելիքները պրակտիկ կիրառման միջոցով:

Հանձնաժողովն ունի կառուցվածքային հետևյալ ստորաբաժանումները՝

- սակագնային քաղաքականության և ֆինանսական վերլուծության բաժին
- իրավաբանական, մեթոդաբանության, հետազոտությունների բաժին
- լիցենզավորման, մոնիթորինգի և վերահսկողության բաժին
- վարչատնտեսական բաժին

2008 թվականին հանձնաժողովը հիմնականում զբաղվել է ենթաօրենսդրական դաշտի ձևավորման համար որոշումների ընդունմամբ:

2008թ. ընթացքում հանձնաժողովի կողից ընդունվել են հետևյալ որոշումները.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառի էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության և բաշխման լիցենզիաների մասին

«Էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի (10 ՄՎտ և ավելի) և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը» հաստատելու մասին

«Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիայում փոփոխություններ կատարելու կարգը» հաստատելու մասին

«Տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման» №ՏՓԾ-003 և «Հեռախոսային ծառայությունների մատուցման» №ՀԾ-002 լիցենզիաների գործողությունները դադարեցնելու մասին

ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից իր մտադրության հրապարակումը «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ին ֆիքսված և բջջային ծառայությունների մատուցման համար մենաշնորհի և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման համար գերիշխող ձանաչելու մասին

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2008թ. անվանական կազմը և կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաստատելու մասին *(20.03.08թ.№ 12Ն որոշմամբ ուժը կորցրած է ձանաչվել)*

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համարագրման պլանը հաստատելու մասին

«Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին *(20.05.08թ. Թիվ 31Ա որոշմամբ կատարվել է փոփոխություններ)*

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2008թ. հունվարի 25-ի թիվ 5/Ն հրամանով հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվետվության ձևին համաձայնություն տալու մասին

«Էլեկտրական էներգիայի արտադրության» № ԷԲ-01 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին

ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից իր մտադրության հրապարակումը «Արմինկո-ՆԿ» ՍՊԸ-ին ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման համար գերիշխող ձանաչելու մասին

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2008թ. անվանական կազմը և կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաստատելու մասին

«ԱրցախԷԿ» փակ բաժնետիրական ընկերությանը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին

«ԱրցախՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության «Թարթառ» հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին

«Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի հաղորդման և բաշխման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին

«Արդի տեխնոլոգիաներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին

Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի որոշման կարգը հաստատելու մասին

«Ապրանքային շուկաների սահմանների և ծավալների որոշման կարգը» հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007թվականի նոյեմբերի 27-ի թիվ 18Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջերմամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի գործունեության հաշվետվությունը հաստատելու մասին

Էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգը հաստատելու մասին
Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին

«Արցախփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին

«Արցախփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին

Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանի (ռեեստրի) վարման կարգի մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կենցաղային սպառման համար բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին

«Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների սահմանման մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008թ. փետրվարի 7-ի որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրային էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում մատուցվող ծառայությունների սակագները սահմանելու մասին

«ՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից արտադրված «Քարվաճառ» հանքային ջրի շշալցման և իրացման վերաբերյալ հարցը ուսումնասիրելու մասին

«ՎԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «տնտեսական

մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի խախտման փաստի մասին

«Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը հանրային ամրակցված հեռախոսակապի, բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման համար մենաշնորհի և տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման համար գերիշխող դիրք ունեցող համարելու մասին

«Արմինկո-ՆԿ» սահմանափակ պատասխանատվությանը ընկերությանը տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման համար գերիշխող դիրք ունեցող համարելու մասին

«Էներջի» փակ բաժնետիրական ընկերությանը 2006թ. դեկտեմբերի 5-ին տրված «Խաչեն գետի փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման» № 001 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007թ. դեկտեմբերի 26-ի թիվ 23Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

Ստեփանակերտ քաղաքի տարածքում FM 105.5 ՄՀց հաճախությամբ ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթ հայտարարելու մասին

Ստեփանակերտ քաղաքի տարածքում FM 105.0 ՄՀց հաճախությամբ ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթ հայտարարելու մասին

Բազմաբնակարան շենքում գործող բաժանորդի և կեցադային սպառում ունեցող բաժանորդի բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին

Բնական գազի մատակարարման (մատակարար-ոչ կենցաղային սպառում ունեցող բաժանորդ) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին

«Արցախ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N 0001 լիցենզիան վերաձևակերպելու մասին

Էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման կարգը հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային համակարգում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի աշխատակազմի աշխատակիցներին՝ ըստ հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտների, գործնետության կանոնակարգումը հաստատելու մասին

Սպառողների սպասարկման որակի գնահատման նպատակով «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևերը հաստատելու մասին

«Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով ներկայացվելիք տեղեկատվությունների ձևերը հաստատելու մասին

Էլեկտրոնային հաղորդակցության բանագավառում վեձերի լուծման կարգը հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի աշխատակիցներին խրախուսելու մասին

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության «Սարսանգ» հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի վերանայման մասին

Ստեփանակերտ քաղաքի տարածքում FM 103.0, 104.3, 106.0 և 107.5 ՄՀց հաճախականությամբ ռադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթ հայտարարելու մասին

Էլեկտրական էներգիա արտադրող ընկերությունների կողմից առաքված էլեկտրական էներգիայի (հզորության) սակագների հաշվարկման մեթոդաբանությունը հաստատելու մասին

Էլեկտրական էներգիայի մատակարարման (մատակարար-սպառող (բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին

Ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը հաստատելու մասին

Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարման կարգի և հայտարարագրի ձևի մասին

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում սպառողներին մատուցվող ծառայությունների որակի մոնիթորինգի կարգը հաստատելու մասին

Էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին

«Ջրային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Ջեռուցման նպատակով օգտագործվող ջերմային էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009թ. տարեկան գործունեության ծրագիրը հաստատելու մասին

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականությունը հաստատելու մասին

Ջերմային էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին

Շոգու և տաք ջրի տեսքով ջերմային էներգիայի մատակարարման (առք ու վաճառքի) պայմանագրի օրինակելի ձևի հաստատման մասին

«Ջերմային տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերության ջեռուցման սակագնի սահմանման մասին

«Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի հաղորդման և բաշխման ծառայությունների մատուցման սակագների վարանայման մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008թ. հուլիսի 25-ի «էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերը և դրանց ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 44Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գազամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին

«Ասկերանի կոմունալ տնտեսություն» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին

Ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագների մշակման մեթոդաբանությունը հաստատելու մասին

Հացի իրացման գների վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնելու մասին

«Ռեալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաձախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին

«Կապ Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին

Հանձնաժողովը 2008թ. ընթացքում լիովին կատարել է իր 2008թ. գործունեության ծրագիրը:

2008թ. ընթացքում հանձնաժողովը սերտորեն համագործակցել է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովի, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովի հետ՝ համաձայն 2007թ. կնքված փոխադարձ համագործակցության հուշագրերի:

2008թ. ընթացքում հանձնաժողովի կողմից որպես պետական տուրք ԼՂՀ պետական բյուջե է գանձվել 15 760 000 դրամ:

Հանձնաժողովի պահպանման ծախսերի 70%-ն ապահովվում է հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներով և կազմում է 35 073 220 դրամ:

2008թ. նոյեմբեր ամսին հանձնաժողովը ԼՂՀ ԱԺ է ներկայացրել 2009թ. գործունեության ծրագիրը՝ հրապարակելու համար:

Ձևավորվել է հանձնաժողովի նյութատեխնիկական բազան: Սակայն հանձնաժողովի շենքային պայմանները չեն համապատասխանում նրա գործունեության բնույթին, մասնավորապես բացակայում է նիստերի անցկացման դահլիճը: Հանձնաժողովը հրավիրված նիստերի հրապարակայնությունը և թափանցիկությունը ապահովելու համար նիստերը հրավիրում է հանձնաժողովին հատկացված շենքի սահմաններից դուրս, ինչը դժվարություններ ու անհարմարություններ է ստեղծում հանձնաժողովի նիստերի հրավիրման ժամանակ:

Հանձնաժողովի աշխատակազմի հաստիքներն անբավարար են, որպեսզի հանձնաժողովը իրականացնի օրենքներով իրեն վերապահված իրավասությունները: Այդ կապակցությամբ հանձնաժողովը մտադրություն ունի աշխատակազմի հաստիքները և ստորաբաժանումների կառուցվածքը՝ սկսած 2010 թվականից, տարեց-տարի համապատասխանեցնել հանձնաժողովին վերապահված իրավասություններին ու գործունեության շրջանակներին:

2008թ. ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովին ԼՂՀ պետական բյուջեով հատկացվել է 50 104 600 դրամ: Փաստացի ծախսը կազմել է 36 965 400 դրամ կամ 2008թ. հանձնաժողովի պահպանման ծախսերից տնտեսվել է 13 139 200 դրամ:

ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը

Ստորև ներկայացվում են հանձնաժողովի 2008 թվականի հաստատված բյուջեի ֆինանսավորման և փաստացի ծախսերի տվյալները:

N	Ծախսի անվանումը	Տարեկան հաստատված բյուջե /հազ.դրամ/	Փաստացի ծախս /հազ.դրամ/	Տարբերությունը տարեկան հաստատված բյուջեի նկատմամբ /հազ.դրամ/*
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՆՍԵՐ	50104.6	36965.4	13139.2
1	Հաստիքների քանակը	27	16	10
2	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	35789.0	24422.0	11367.0
2.1.	այդ թվում՝ Աշխատավարձի ֆոնդ (գոյություն ունեցող)	34749.0	23382.0	11367.0
2.2.	Հայեցողական և տեխնիկական սպասարկող անձանց խրախուսման ֆոնդ	1040.0	1040.0	0.0
3	Այլ ընթացիկ տրանսֆերտներ	5368.4	3663.3	1705.1
3.1.	այդ թվում՝ Պարտադիր սոցապահովագրության վճարներ	5368.4	3663.3	1705.1

4	Գույք, գրասենյակային ապրանքներ և նյութեր	3349.2	3288.5	60.7
4.1.	այդ թվում՝ Գրասենյակային ապրանքներ և նյութեր	1080.0	1026.4	53.6
4.2.	Գույք և սարքավորումներ	2269.2	2262.1	7.1
5	Գործուղումներ և ծառայողական ուղևորություններ	991.0	987.4	3.6
6	Տրանսպորտային ծառայությունների վճար	1600.0	1645.2	-45.2
7	Հեռախոսային կապի ծառայությունների վճար	664.4	632.8	31.6
7.1.	այդ թվում՝ Քաղաքային հեռախոսների բաժանորդավճարի կատարման ծախսեր	86.4	59.7	26.7
7.2.	Հեռախոսակապի այլ միջոցների բաժանորդավճարի կատարման ծախսեր	214.0	207.5	6.5
7.3.	Միջքաղաքային խոսակցությունների վճարի կատարման ծախսեր	195.0	197.4	-2.4
7.4.	Կապի այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր	169.0	168.2	0.8
8	Կոմունալ ծառայությունների վճար	246.6	231.2	15.4
8.1.	այդ թվում՝ Վառելիքի և ջեռուցման ծախսեր	96.0	104.7	-8.7
8.2.	Էլեկտրաէներգիայի ծախսեր	115.0	108.7	6.3
8.3.	Ջրնուղ-կոյուղուց օգտվելու վարձ	19.5	2.9	16.6
8.4.	այլ կոմունալ ծախսեր(աղբահանության, վնասատ. կրծող. ոչնչացման, ախտահանման, ընթացիկ նորոգման ծախսեր)	16.1	14.9	1.2
9	Այլ ծախսեր	2096.0	2095.0	1.0
9.1.	Ծառայությունների ձեռք բերման և ներկայացուցչական ծախսեր որից՝	200.0	199.0	1.0
9.1. 1.	ներկայացուցչական ծախսեր	200.0	199.0	1.0
9.2.	Այլ ծառայությունների ձեռքբերման ծախսեր	1896.0	1896.0	0.0
9.2. 1.	Այլ	1896.0	1896.0	0.0
	Ծառայողական ավտոմեքենաների քանակը	1	1	

* Սյունակի բացասական ցուցանիշները պայմանավորված են նախորդ տարվա մնացորդային գումարների հետ